ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 55-86-1

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 31.03.2001 թ.
արտագնա նիստի

Նախագահում էր՝

| | |
|---|---|
| Ա. Մարգարյան | - ՀՀ վարչապետ |

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Մ. Թոփուզյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար |
| Տ. Սարգսյան | - ՀՀ կենտրոնական բանկի նախագահ |
| Կ. Կիրակոսյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ |
| Լ. Մկրտչյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ |
| Ա. Ավետիսյան | - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ |
| Կ. Հայրապետյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ |

«Նորավանք» հիմնադրամի գործունության հետ
կապված կազմակերպական խնդիրների մասին

---

(Տ. Սարգսյան, Կ. Կիրակոսյան, Լ. Մկրտչյան,
Ա. Ավետիսյան, Կ. Հայրապետյան, Մ. Թոփուզյան,
Ա. Մարգարյան)

1. Ելնելով «Նորավանք» գիտակրթական կենտրոնի ուսումնագիտական, օժանդակ և բնակելի շենքային համալիրը Վայոց ձորի մարզի Նորավանք եկեղեցու շրջակայքում կառուցելու նպատակահարմարությունից՝

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ մեկամսյա ժամկետում Վայոց ձորի մարզպետ Պ. Մանուկյանի հետ համատեղ ուսումնասիրել «Նորավանք» գիտակրթական կենտրոնին Նորավանք եկեղեցու շրջակայքում համապատասխան տարածք հատկացնելու հարցը և սահմանված կարգով առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն:

2. «Նորավանք» գիտակրթական կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ռուբեն Խուրշուդյանին:

3. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թոփուզյանին և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ Կ. Կիրակոսյանին՝ ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն Երևան քաղաքում հիմնադրամի նստավայրի համար համապատասխան տարածք հատկացնելու մասին (մինչև ապրիլի 7-ը):

4. ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ Կ. Հայրապետյանին՝ նախապատրաստել գրություն Ամենայն հայոց կաթողիկոսին՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում ընդգրկվելու համաձայնություն տալու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 31.03.2001 թ. արտագնա նիստի N 55-86-1
արձանագրությունից

2. «Նորավանք» գիտակրթական կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ռուբեն Խուրշուդյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է
հոգաբարձուների խորհրդի
Անդամ

[illegible]

28.05.2001թ.

Document3